ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2017 թվականի N 73-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱԲՈՎՅԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ N 1 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, Հայասատնի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի «ա» ենթակետի պահանջների և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի մարտի 13-ի N 40-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի ուսումնասիրության արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ *Լաղիկ Նահապետյանին.*

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության 2014-2016 թվականներին գիշերող և երթևեկող երեխաներին տրվող սննդի գծով նախորդ տարիներին հաշվարկված գումարից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե հետ վերադարձնել ***6400000*** *(վեց միլիոն չորս հարյուր հազար)* ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի ապրիլի 14
ք. Հրազդան